

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	9
5.1. Բյուջեի եկամուտները	9
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ և վարկեր	14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	17
8. ԱՄՓՈՓՈՒՄ	17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի սկզբից տնտեսությունը սկսել է վերականգնվել 2020թ. բացասական շուկերի արդյունքում գրանցված խոր անկումից, սակայն կարևոր է ուսումնասիրել, թե որքան արագ է տեղի ունենում այդ վերականգնումը: Հունվար-ապրիլ ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշները սպասվածից ավելի բարձր էին, ինչը խոսում էր արագ վերականգնման մասին, սակայն մայիս ամսին տնտեսական ակտիվության աճը կտրուկ դանդաղել է:

Մայիսի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) նախորդ տարվա մայիսի համեմատ կազմել է 10.9%՝ այն դեպքում, երբ ապրիլին համապատասխան ցուցանիշը կազմել էր 23.2%: Մտահոգիչ է ոչ միայն աճի տեմպի կտրուկ դանդաղումը, այլ նաև այն, որ մայիսի աճը ավելի փոքր է, քան նախորդ տարվա մայիսին գրանցված անկումը՝ 12.9%-ը: Դա նշանակում է, որ տնտեսության վերականգնում տեղի չի ունենում, և եթե հաշվի չառնենք «բազայի էֆեկտի»¹ գործոնը, այսինքն՝ 2021թ. մայիսի ցուցանիշը համեմատենք 2019թ. մայիսի հետ, ապա կստացվի անկում՝ 3.4%-ի չափով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




Հունվար-մայիս ամիսների տնտեսական ակտիվության կուտակային ցուցանիշը կազմել է 4.3%՝ հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշի համեմատ արագանալով շուրջ 1.7 տոկոսային կետով: Սակայն, 2019թ. հետ համեմատելու պարագայում ակնհայտ է դառնում մայիս ամսվա ակտիվության դանդաղումը:

¹ Եթե նախորդ տարվա համեմատվող ժամանակահատվածի տնտեսական արդյունքները խիստ ցածր են, ապա ընթացիկ տարվա նույնիսկ «բնականոն» տնտեսական գործընթացների առկայությունը թույլ կտա արձանագրել տնտեսական ակտիվության չափազանց բարձր աճեր: Այդ երևույթը տնտեսագետները սովորաբար անվանում են «բազայի էֆեկտ»:

Այսպես, հունվար-ապրիլ ամիսների աճը 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 2.8%, իսկ հունվար-մայիս ամիսների աճը՝ 0.1%:


2021թ. հունվար-մայիս ամիսների 4.3% ՏԱՑ-ի աճն առավելապես պայմանավորված է առևտրի ոլորտում տնտեսական ակտիվության աճով, որի նպաստումը կազմել է 2.7 տոկոսային կետ: Մնացած ոլորտները նույնպես ունեցել են դրական նպաստում տնտեսական ակտիվությանը, որոնցից ամենամեծը եղել է շինարարության նպաստումը՝ 0.8 տոկոսային կետով, իսկ արդյունաբերության և ծառայությունների նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.6 և 0.2 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-մայիս ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության աճը նույնպես դանդաղել է 2021թ. մայիսին: Սակայն, ի տարբերությունը ընդհանուր СУՑ-ի, արդյունաբերության ոլորտում գրանցված աճը գերազանցել է նախորդ տարվա անկման չափը, ինչի արդյունքում 2019թ. նկատմամբ աճը կազմել է շուրջ 4.4%:

Արդյունաբերության աճի տեմպի արագացումը պայմանավորված է հանքարդյունաբերության աճով, իսկ մշակող արդյունաբերությունն ունեցել է նվազման միտում: Մասնավորապես, 2021թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալներով², հանքարդյունաբերության աճը կազմել է 8.8%՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով 1.9 տոկոսային կետով, իսկ մշակող արդյունաբերությունը նվազել է 3.9%-ով և ընդհանուր արդյունաբերության աճին ունեցել է 2.7 տոկոսային կետով բացասական նպաստում:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերում գրանցվել է աճ համապատասխանաբար 9.7% և 2.8%, որոնց նպաստումը ընդհանուր արդյունաբերությանը կազմել է համապատասխանաբար 1.7 և 0.03 տոկոսային կետ:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության աճը ապրիլի կտրուկ արագացումից հետո մայիսին կտրուկ դանդաղել է: Շինարարության ծավալները մայիսին աճել են ընդամենը 0.5%-ով՝ այն դեպքում երբ նախորդ տարվա մայիսին շինարարության անկումը

² Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-մայիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

կազմել էր 27.0%: Դրա արդյունքում շինարարության կուտակային աճը հունվար-մայիս ամիսներին դանդաղել է՝ 20.3%-ից դառնալով 14.3%: 2019թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ շինարարության ծավալները նվազել են 12.4%-ով, ինչը բավական մտահոգիչ է:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտում գրանցվել է ակտիվության աճի արագացում, սակայն գրանցած աճերը դեռևս շարունակում են մնալ ցածր (վերականգնման համար անհրաժեշտ աճերի համեմատ): Ծառայությունների աճը մայիսին կազմել է 17.3%՝ այն դեպքում, երբ նախորդ տարվա մայիսին գրանցված անկումը կազմել էր 20.2%: Հունվար-մայիս ամիսների ցուցանիշը դարձել է դրական, սակայն եղել է բավական ցածր՝ 0.9%-ի չափ: Այս ճյուղի տնտեսական ակտիվությունը նույնպես չի հասել 2019թ. մակարդակին՝ հունվար-մայիս ամիսներին լինելով դրանից 3.9%-ով ցածր:

Հունվար-ապրիլ ամիսների տվյալներով³ ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» (անկումը՝ 37.4%) և «տրանսպորտային ծառայություններ» (անկումը՝ 10.6%) ենթաճյուղերի անկումներով, որոնց նպաստումները ընդհանուր ծառայությունների անկմանը կազմել են համապատասխանաբար 6.8 և 0.7 տոկոսային կետ: Ծառայությունների անկմանը հակազդել են «տեղեկատվություն և կապ» (աճը՝ 13.5%), և «կացության և հանրային սննդի կազմակերպում» (աճը՝ 27.0%) ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 1.4 և 1.0 տոկոսային կետով:

³ Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-մայիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում ապրիլին գրանցված կտրուկ աճը նույնպես դանդաղել է: Մայիս ամսին առևտրի ծավալների աճը նախորդ տարվա մայիսի համեմատ կազմել է 17.6%՝ ապրիլի ցուցանիշի համեմատ դանդաղելով 30.2 տոկոսային կետով: Հունվար-մայիս ամիսների աճը կազմել է 7.4%՝ այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում առևտրի ոլորտի անկումը կազմել էր 10.8%: 2019-ի նկատմամբ առևտրի ծավալները նվազել են 4.2%-ով:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %




Արտահանման ծավալների աճի տեմպը նույնպես դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակում: 2021թ. մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ապրանքների արտահանման ծավալն աճել է 36.7%-ով, ինչի

արդյունքում արտահանման կուտակային աճը նույնպես զգալի արագացել է՝ հասնելով 20.9%-ի: 2019թ. համեմատ արտահանման աճը նույնպես բարձր է և կազմում է 12.2%:

Հունվար-ապրիլ ամիսների տվյալներով⁴ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է հանքահումքային արտադրանքի (աճը՝ 25.3%) աճով, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է շուրջ 8.8 տոկոսային կետ: Արտահանման աճին հակազդել է «սարքեր և ապարատներ» (անկումը՝ -65.7%) ապրանքախմբի արտահանման ծավալների անկումը, որն ընդհանուր արտահանման աճին հակազդել է 2.2 տոկոսային կետով:

Արտահանման ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում հունվար և հունվար-փետրվար ամիսների արտահանման անկումները մեղմվել են համապատասխանաբար 0.3 և 0.1 տոկոսային կետով, իսկ հունվար-մարտ և հունվար-ապրիլ ամիսների աճի ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 0.4 և 0.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալները ապրիլ և մայիս ամիսներին զգալիորեն աճել են, սակայն դա բավարար չի եղել բազայի էֆեկտից ավելի աճ ունենալու համար: 2021թ. մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալներն աճել են 34.5%-ով, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների կուտակային աճն արագացել է՝ կազմելով 6.7%: Սակայն, եթե այդ ցուցանիշից հանենք բազայի էֆեկտը, ապա կուտակային ցուցանիշը կլինի բացասական՝ 7.6%-ի չափ՝ արտացոլելով տնտեսությունում դեռևս չվերականգնված պահանջարկը:

⁴ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-մայիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

2021թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալներով⁵ ներմուծման կառուցվածքում գրեթե բոլոր ապրանքատեսակներն ունեցել են աճի միտում, որոնցից նշանակալի է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի աճը, որը կազմել է շուրջ 30.0%՝ ընդհանուր ներմուծման աճին նպաստելով 1.2 տոկոսային կետով: Ներմուծման աճին շուրջ 0.8 տոկոսային կետով հակազդել է «պատրաստի սնունդ» ապրանքախմբի ներմուծման անկումը, որը կազմել է -8.5%:

ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են ինչպես 2021թ. նախորդ ամիսների, այնպես էլ նախորդ տարվա ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում 2021թ. հունվար, հունվար-փետրվար և հունվար-մարտ ամիսների անկման ցուցանիշները վատթարացել են համապատասխանաբար 1.0, 1.7 և 2.4 տոկոսային կետով, իսկ հունվար-ապրիլ ամիսների ներմուծման ծավալների աճը նախկինում հրապարակված 2.2%-ի փոխարեն դարձել է 0.2%:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-ապրիլ ամիսներին միջին աշխատավարձերն աճել են և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում⁶: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 3.5%-ով՝ կազմելով 194,975.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 2.9%-ով և կազմել՝ 166,981.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 3.7%-ով՝ կազմելով 208,633.0 դրամ:

⁵ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-մայիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:


⁶ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը օպերատիվ տվյալների հրապարակման հետ միասին: Փոխարենը՝ աշխատավարձի տվյալները հրապարակվում են ավելի ուշ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը
2020-2021թթ. հունվար-ապրիլ ամիսներին, %**



4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է << դրամի արժևորում)**





2021 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն արժեզրկվել է ինչպես ԱՄՆ դոլարի և եվրոյի, այնպես էլ ՌԴ ռուբլու նկատմամբ: Հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամը զգալիորեն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն վերջին ամիսներին արժեզրկման տեմպը փոքր-ինչ դանդաղել է: Արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 7.6% և 15.9%: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը տարեսկզբից ունեցել է արժևորման միտում, որը սակայն աստիճանաբար դանդաղել է: Հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 0.3%-ով:

5. ՀԱՐԿԱՐՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁷


5.1. Բյուջեի եկամուտները

2021թ. մայիսին պետական բյուջեի եկամուտների աճի տեմպն արագացել է հիմնականում «բազայի էֆեկտի» հաշվին: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2021թ. հունվար-մայիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 5.7%-ով՝ կազմելով 648.8 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճը կազմել է 5.9%, իսկ հարկային եկամուտների ծավալը կազմել է 618.4 մլրդ դրամ: Ընդ որում, ընթացիկ տարվա մայիս ամսին հարկային եկամուտների աճը 2019թ. մայիսի համեմատ կազմել է շուրջ 0.7%՝ այն դեպքում, երբ ապրիլի աճը 2019թ. ապրիլի նկատմամբ կազմել էր 8.0%: Սա նշանակում է, որ ակնհայտորեն առկա է հարկային եկամուտների աճի դանդաղման միտում, ինչը սպասելի է տնտեսական ակտիվության աճի դանդաղման պայմաններում:

⁷ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Բյուջեի այլ եկամուտները նույն ժամանակահատվածում աճել են 1.4%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 4.6%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %




Հարկային եկամուտների աճը հունվար-մայիս ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 9.5%), մաքսատուրքի (աճը՝ 38.9%) և սոցիալական վճարների (աճը՝ 85.3%) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.0, 1.6 և 1.4 տոկոսային կետ: Նկատենք, որ հարկային եկամուտների աճը ապահովող երեք գործոններից երկուսը կապված չեն տնտեսական իրավիճակի և հարկային վարչարարության հետ: Այսպես, մաքսատուրքերի աճը պայմանավորված է ԵԱՏՄ երկրների ընդհանուր ներմուծման աճով, իսկ սոցիալական վճարների աճը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով (որոնց համաձայն բարձրացվել են սոցիալական վճարների դրույքաչափերը): Հետևաբար, հարկային եկամուտների աճի միայն մի մասն է բացատրվում տնտեսական ակտիվության աճով: Ավելին, տնտեսական ակտիվությամբ պայմանավորված և հարկային եկամուտներին զգալի նպաստում ունեցող ԱԱՀ-ն 2019-ի հետ համեմատությամբ դրսևորում է աճի դանդաղման միտում՝ մայիսին գրանցելով 4.7% աճ՝ ապրիլի 6.1%-ի փոխարեն:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-մայիս		2021թ. հունվար-մայիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	2.2	2.2	5.9	5.9
ԱԱՀ	-3.5	-1.2	9.5	3.0
Շահութահարկ	14.8	2.1	-3.0	-0.5
Եկամտային հարկ	4.9	1.4	0.4	0.1
Ակցիզային հարկ	4.9	0.4	-18.4	-1.4
Շրջանառության հարկ	9.6	0.2	-1.8	0.0
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	24.7	0.6	13.5	0.4
Մաքսատուրք	-27.2	-1.6	38.9	1.6
Սոցիալական վճար	16.7	0.2	85.3	1.4
Այլ հարկային եկամուտներ	22.9	0.3	73.8	1.2
Պետական տուրք	-3.4	-0.1	4.5	0.1

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերը շարունակում են արագ աճել՝ տնտեսական ակտիվության աճի դանդաղման պայմաններում: 2021թ. հունվար-մայիս

ամիսներին ՀՀ պետական բյուջեից իրականացվել է 723.6 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի համեմատությամբ ավելի է 13.2%-ով:

Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ ծախսերի 8.9%, այնպես էլ կապիտալ ծախսերի մոտ 1.8 անգամ աճով: Ընդ որում, հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի ծավալը աճել էր մարտ ամսին (միայն մարտ ամսին կատարվել է մոտ 41 մլրդ դրամի կապիտալ ծախս), ինչը պայմանավորված է ռազմական ծախսերի իրականացմամբ (ՀՀ ՊՆ շենքային պայմանների բարելավում), իսկ ապրիլ-մայիս ամիսներին կապիտալ ծախսերի աճը բավական փոքր է: Այսպես, ապրիլի աճը նախորդ տարվա ապրիլի նկատմամբ կազմել է 5.5%, իսկ մայիսին կապիտալ ծախսերը նվազել են նախորդ տարվա մայիսի համեմատ շուրջ 23.4%-ով: Դա նշանակում է, որ տնտեսության իրական հատվածում պետական կապիտալ ներդրումներ գրեթե չեն իրականացվում՝ խանգարելով տնտեսական վերականգնմանը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդը աճել է, սակայն այն ցածր է նույնիսկ առաջին եռամսյակի համար պլանավորված պակասուրդի ծավալից: 2021թ. հունվար-մայիս ամիսներին պետական բյուջեի ծախսերը գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի պակասուրդ՝ 74.8 մլրդ դրամի չափով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ զգալի մեծ լինելով հանդերձ, պակասուրդը հեռու է բյուջեով ծրագրավորված ցուցանիշից, որը առաջին եռամսյակի համար կազմում է 84.6 մլրդ դրամ, իսկ հունվար-հունիս ամիսների համար՝ 179.0 մլրդ դրամ: Պլանավորված ծավալից փոքր լինելու


հիմնական և ամենամտահոգիչ պատճառներից է կապիտալ ծախսերի թերակատարումը:

5.4. Պետական պարտք

2021թ. մայիսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 8,816.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա մայիսի նկատմամբ աճելով 14.3%-ով: Մինչդեռ ժամանակ, դրամով արտահայտված պետական պարտքն աճել է 23.0%-ով՝ հասնելով 4,591.2 մլրդ դրամի:

Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ դոլարային արտահայտությամբ 15.3%-ով, իսկ դրամային արտահայտությամբ 24.0%-ով: Պարտքի աճի տեմպի դանդաղումը հունվար-ապրիլի համեմատ հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով՝ նախորդ տարվա մայիսին պարտքի կտրուկ աճով: Կառավարության պարտքի ծավալը մայիսի վերջի դրությամբ նախորդ տարվա մայիսի համեմատ աճել է շուրջ 1.1 մլրդ դոլարով, իսկ 2020թ. վերջի համեմատ՝ 809.6 մլն ԱՄՆ դոլարով: Պարտքի աճը առավելապես տեղի է ունեցել արտաքին պարտքի հաշվին:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը մայիսին փոքր-ինչ դանդաղել է, սակայն շարունակում է մնալ բարձր: 12-ամսյա գնաճն ընթացիկ տարվա մայիսին կազմել է 5.9%՝ նախորդ ամսվա նկատմամբ դանդաղելով 0.3 տոկոսային կետով: Գնաճային միջավայրին արձագանքելով՝ ՀՀ ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը մայիս և հունիս ամիսներին 0.5-ական տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.5%: Ընդհանուր առմամբ ընթացիկ տարվա ընթացքում ԿԲ-ն բարձրացրել է տոկոսադրույքը 1.25 տոկոսային կետով:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021թ. մայիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը արագացել է: Մայիսի վերջի դրությամբ ավանդների ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 9.1%-ով՝ ապրիլի համապատասխան ցուցանիշի համեմատ արագանալով 1.0 տոկոսային կետով: Վերջին երկու ամիսներին ավանդների ծավալների աճի արագացումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նույն ամիսներին ավանդների դուրսբերման հետևանքով ցածր բազայի ձևավորմամբ:


Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2021թ. մայիսին ավանդների աճը հիմնականում պայմանավորված է եղել ձեռնարկությունների ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 5.1 տոկոսային կետ: Աճին նպաստել են նաև տնտեսության այլ հատվածների ավանդների աճը, որոնց շարքում նշանակալի է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է 1.8 տոկոսային կետ:

Վարկերի աճի տեմպը կտրուկ դանդաղել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) աճը 2021 թվականի մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ դանդաղել է՝ կազմելով 5.4%:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ




Վարկերի աճին հիմնականում նպաստել են հիպոթեքային, շինարարության և արդյունաբերության ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.0, 1.7 և 1.6 տոկոսային կետ: Վարկերի աճի դանդաղումը պայմանավորված է տնտեսության այլ ճյուղերի վարկերի (նպաստումը՝ -3.2 տոկոսային կետ) և սպառողական վարկերի ծավալների (նպաստումը՝ -1.4 տոկոսային կետ) նվազմամբ, ինչպես նաև մնացած ոլորտների վարկերի աճի տեմպի դանդաղմամբ:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաճարակային իրավիճակը որոշակիորեն բարելավվել է, և COVID-19-ի երրորդ ալիքը մարել է: 2021թ. մայիսին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը զգալիորեն կրճատվել է՝ կազմելով օրական 213 դեպք, իսկ մահվան դեպքերը կազմել են օրական 11-ը: Հունիսին իրավիճակը շարունակել է բարելավվել. միջին օրական նոր գրանցված դեպքերը կազմել են 79, իսկ մահվան միջին օրական դեպքերը՝ 3: Հետևաբար, կարելի է համարել, որ երրորդ ալիքը մարել է, քանի որ հիվանդության նոր գրանցված դեպքերը ավելի փոքր են, քան նախորդ ալիքների միջև ընկած ժամանակահատվածում գրանցվող ցուցանիշները:

Աշխարհի մյուս երկրների համեմատությամբ ՀՀ-ում տիրող իրավիճակը նույնպես բարելավվել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 40-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 37-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով՝ 33-րդը՝ նախորդ ամսվա 31-րդ տեղի փոխարեն:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. հունիսի 25-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Մայիս ամսին տնտեսության վերականգնման տեմպը կտրուկ դանդաղել է: Ապրիլ ամսին գրանցված տնտեսական ակտիվության բարձր աճերը մայիսին չեն պահպանվել: Ավելին, տնտեսական ակտիվության աճը գրեթե բոլոր ոլորտներում կտրուկ դանդաղել է, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների

տնտեսական ակտիվության աճը 2019թ. համեմատ կազմել է ընդամենը 0.1%: Եթե տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղումը շարունակվի նաև հաջորդ ամիսներին, ապա 2021թ. իրական ՀՆԱ-ն ավելի ցածր կլինի, քան 2019 թվականին, այսինքն, նույնիսկ 2019թ. մակարդակը չի վերականգնվի:

2. 2019թ. համեմատ աճող միակ ճյուղը հանքարդյունաբերությունն է:

2021թ. հունվար-մայիս ամիսների տվյալներով միայն հանքարդյունաբերական արտադրանքի ծավալն է գերազանցում 2019թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Դա էլ իր հերթին պայմանավորված է միջազգային շուկայում պղնձի գների աննախադեպ աճով: Ստացվում է, որ եթե չլիներ արտաքին բարենպաստ միջավայրը, ապա ՀՀ տնտեսական ակտիվությունը կլիներ 2019թ. մակարդակից ցածր: Հետևաբար, կարելի է արձանագրել, որ ՀՀ տնտեսության վերականգնման տեմպը մտահոգիչ է:

3. Պետական բյուջեի կապիտալ ծախսերը շարունակում են չկատարվել: 2021թ. մայիսին կապիտալ ծախսերը նախորդ տարվա մայիսի համեմատ նվազել են շուրջ 23.4%-ով: Կապիտալ ծախսերի թերի իրականացումը նույնպես բացասաբար է ազդում տնտեսական ակտիվության վրա՝ դանդաղեցնելով տնտեսական վերականգնումը: Սակայն, բացի ընթացիկ տարվա տնտեսական ակտիվության «տուգանումից», կապիտալ ծախսերի թերի իրականացումը բացասաբար է ազդում նաև ապագա տարիների տնտեսական աճի տեմպի վրա, հետևաբար կառավարության կողմից արդեն երրորդ տարին այսպիսի վարքագծի դրսևորումը զգալիորեն կրճատել է ՀՀ տնտեսական աճի պոտենցիալը:

4. Գնաճի տեմպը շարունակում է մնալ բարձր: Թեև մայիս ամսին գնաճի տեմպը փոքր-ինչ դանդաղել է, այն դեռևս մնում է բարձր՝ պահպանվելով ՀՀ ԿԲ-ի թիրախի վերին սահմանից բարձր մակարդակում: ՀՀ կենտրոնական բանկը, արձագանքելով գնաճային միջավայրին, ընթացիկ տարվա ընթացքում աստիճանաբար բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով: ԿԲ-ի քաղաքականությունն իր հերթին ունենում է զսպող ազդեցություն տնտեսական ակտիվության վրա՝ նպաստելով աճի տեմպի դանդաղմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: